

ֆերմենտների ակտիվության բարձրացում 20-50%: Երիկամների ՀՖ-ի ակտիվությունը հասնում է 90%, մինչդեռ ուղեղի նույն ֆերմենտի ակտիվությունը ընկճվում է 30%: Ստացված տվյալները վկայում են, որ ուղեղի պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդը մասնակցում է տարբեր օրգանների փոխանակության պրոցեսներում:

ՆԱԴՔԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԼԻՊՈՊՐՈՏԵԻՆԻ (ՆԼՊ) և ՆԱԴՔԻ ՕՔՍԻԴԱԶԻ (NOX) ՄԻՋԼ ԿԱԶՄՎԱԾ ՍՈՒՊԵՐՕՔՍԻԴ-ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ԱՍՈՑԻԱՏԻ ՍՏԱՑՈՒՄ և ՆԼՊ-ՈՎ ԱՌՆԵՏԻ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ԲՋԻՋՆԵՐԻ, ԿՈՐԻՋՆԵՐԻ ՈՒ ՄԻՏՈՔՈՒՐԻՈՒՄՆԵՐԻ ԹԱՂԱՆԹՆԵՐԻ և ԻՍՈՒՆԱՑԻՆ ԲԶԶԱԹԱՂԱՆԹՆԵՐԻ NOX-ԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Միմոնյան Ռ.Ս.¹, Բաբայան Մ.Ա.¹, Միմոնյան Գ.Ս.¹, Ֆեսայան Ս.Ս.²,
Միմոնյան Ս.Ա.¹

¹ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան Կենսաքիմիայի ինստիտուտ
²Երևանի Մ.Հերացու անվան Պետական բժշկական համալսարան
ruzan.simonyan@gmail.com

Առաջին անգամ սպիտակ առնետների ուկրաժուժի բջիջների, կորիզների ու միտոքոնդրիումների թաղանթներից անջատվել ու մաքրվել են սուպերօքսիդ (O_2^-)-գեներացնող ասոցիատի իզոմերներ, կազմված ՆԱԴՔԻ պարունակող լիպոպրոտեինից (ՆԼՊ) ու ՆԱԴՔԻ օքսիդազի թերմինալ իզոմերների գումարային ֆրակցիայից ($Nox1+Nox2$) [ՆԼՊ-Nox]: Վակուում լիոֆիլացումից հետո ՆԼՊ-Nox-ի ասոցիատի իզոմերների տեսակարար քանակները, ստացված 1գ ուկրաժուժի բջիջների, կորիզների ու միտոքոնդրիումների թաղանթներից համապա-

տասխանաբար կազմում են $21,3 \pm 2,1$ մգ, $25,2 \pm 3,0$ մգ, $32,0 \pm 3,4$ մգ ($p < 0,05$, $n=6$): Ստացված ՆԼՊ-Nox-ի ասոցիատի իզոմերի մաքսիմալ օպտիկական կլանումները տեսանելի մարզում 412 նմ-ում են (թույլ կլանում) և 280 նմ-ում :

Անջատված ՆԼՊ-ի իզոմերները ցուցաբերում են վերականգնիչ (հակաօքսիդանտային) ակտիվություն, խթանելով էրիթրոցիտների ու լեյկոցիտների O_2^- -գեներացնելու ակտիվությունը: Նշված ասոցիատները O_2^- -եր գեներացնում են անմիջական և ոչ թե «համակցման» մեխանիզմով, տեղափոխելով ՆԼՊ-ի ՆԱԴPH-ի էլեկտրոնը ասոցացված Nox-ի հեմային խմբի Fe(III)-ով (որպես էլեկտրոնի տեղափոխման կամրջակ) դեպի O_2 վերականգնելով այն մինչև O_2^- : Ոսկրածուծի ասոցիատներով O_2^- -երի գեներացման տեսակարար ակտիվությունը էրիթրոցիտների թաղանթներից անջատված ասոցիատների համեմատ ավելի է 1,5-1,7 անգամ: Որպես O_2^- -երի գոյացման բնական, եռանդուն և անընդհատ գործող նոր համակարգեր, առաջարկվում է դրանք օգտագործել որպես հակամանրեային ու հակավիրուսային ագենտներ, իսկ ՆԼՊ-ն որպես իմունադեֆիցիտի նվազեցման միջոց՝ էքսպերիմենտում: